

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
18 փետրվարի 2015 թ.
Պետական գրանցման թիվ 11815053

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

4 փետրվարի 2015 թ.
ք. Երևան

N 46-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԵՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 826-Ն որոշման 2-րդ կետի 9-րդ ենթակետը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 503-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 14-րդ կետի 4-րդ ենթակետով`

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ`

1. Սահմանել «Սոցիալական վճարի գերավճարների վերադարձման կարգը» համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ ֆինանսների նախարար

Գ. Խաչատրյան

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2015 թվականի փետրվարի 4-ի
N 46-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԵՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է սոցիալական վճարի գերավճարները վերադարձնելու հարաբերությունները:
2. Սոցիալական վճարի հաշվեհամարներին մուտքագրված սոցիալական վճարի պարտավորություններից ավելի վճարված գումարները (գերավճարները) ենթակա են վերադարձման հարկային գործակալի (գործատուի) կամ սոցիալական վճարը ինքնուրույնաբար կատարող անձանց (այսուհետ` վճարող) հաշվառման հարկային (տարածքային) տեսչություն ներկայացված դիմումի (Ձև ՄՎ N 1-ը կցվում է) հիման վրա:
3. Սոցիալական վճարի վերադարձը իրականացվում է սոցիալական վճարի գերավճարի մնացորդի այն մասով, որը վերադաս հարկային մարմնի կողմից համարվել է վերադարձման ենթակա:

4. Վերադարձման ներկայացված գերավճարի գումարը համարվում է չհիմնավորված և վճարողի դիմումը մերժվում է, եթե կամերալ, իսկ անհրաժեշտության դեպքում հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի ուսումնասիրությամբ պարզվում է, որ գերավճար առկա չէ:

Սույն կետում նշված դեպքում ուսումնասիրությունների արձանագրության մեջ պարտադիր նշվում են այն հիմքերը (այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել), որոնց հիման վրա վերադարձ չի կատարվում (վերադարձը մերժվում է):

5. Գերավճարի վերադարձը կատարվում է կենտրոնական գանձապետարանի սոցիալական վճարի հաշվեհամարներից վճարողի բանկային հաշվին համապատասխան գումարի փոխանցման միջոցով:

6. Գերավճարը ենթակա է վերադարձման ոչ ուշ, քան վճարողի կողմից դիմումը հարկային (տարածքային) տեսչություն ներկայացնելու օրվանից հետո՝ 15 օրվա ընթացքում (բացառությամբ գերավճարի գումարը հիմնավոր չհամարվելու դեպքերի):

7. Գերավճարը վերադարձնելու վերաբերյալ դիմումը ստանալու օրվանից 3 օրվա ընթացքում ուսումնասիրության միջոցով վերադարձ կատարելու մասին հարկային (տարածքային) տեսչության կազմած եզրակացությունը (Ձև ՍՎ N 2-ը կցվում է) ոչ ուշ, քան եզրակացությունը կազմելուն հաջորդող 3-րդ օրը բացառապես էլեկտրոնային եղանակով ուղարկվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչություն:

8. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչությունը, հարկային (տարածքային) տեսչությունների կողմից ներկայացված վճարողի գերավճարների վերադարձ կատարելու մասին էլեկտրոնային եղանակով ներկայացված եզրակացությունների հիման վրա կազմում և ոչ ուշ, քան դրանք ստանալու օրվան հաջորդող 5-րդ օրը էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն է ներկայացնում «Վճարողների գերավճարների վերադարձների մասին ամփոփ տեղեկանք»-ը (Ձև ՍՎ N 3-ը կցվում է):

9. Եզրակացությունների մասին ամփոփ տեղեկանքի հիման վրա, դրանք ստանալուց ոչ ուշ, քան 4 օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչությունը գումարները փոխանցում է վճարողի բանկային հաշվին:

10. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչությունը վերադարձված գումարների վերաբերյալ տեղեկատվությունը, հարկային (տարածքային) տեսչություններին տրամադրելու նպատակով, ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչություն, որտեղ նշվում են՝

ա. վճարողի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը,
բ. գանձապետական համակարգում վճարման (գործառնության) նույնականացման եզակի համարը,

գ. վճարման օրը, ամիսը, տարեթիվը,

դ. վճարողի (ստացողի) բանկային հաշվի համարը (բանկը, որի միջոցով կատարվել է վճարումը),

ե. վճարված (վերադարձված) գումարը:

11. Գերավճարի վերադարձի ժամկետները խախտելու համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կամ համապատասխան ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող է զանգատարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե այդ ժամկետների խախտման արդյունքում վճարողին օրենքով սահմանված ժամկետում չեն վերադարձվել գերավճարի գումարները:

12. Գումարները փաստացի վերադարձնելու օրը հարկային (տարածքային) տեսչության կողմից սոցիալական վճարի անձնական հաշվի քարտում կատարվում է գերավճարի պակասեցում:

2և ՍՎ N1

(տարածքային) հարկային տեսչություն

ԴԻՄՈՒՄ

Վճարողի գերավճարի վերադարձի համար

ՀՎՀՀ

(կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

Խնդրում եմ սոցիալական վճարի գերավճարի գումարի մնացորդից վերադարձնել դրամով նշված գումարները՝

Բանկը, որին պետք է փոխանցել վերադարձման ենթակա գումարը	Հաշվի համարը, որին պետք է փոխանցել վերադարձման ենթակա գումարը	Անձնական հաշվի քարտում հաշվառված գերավճարից վերադարձման ենթակա գումարը

Դիմումի ներկայացման ամսաթիվը _____ 20__ թ.

Տնօրեն կամ անհատ ձեռնարկատեր (անունը, ազգանունը և ստորագրությունը)

Հարկ վճարողի կնիքը՝

Հաշվապահ (անունը, ազգանունը և ստորագրությունը)

2և ՍՎ N2

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N _____

Վճարողի գերավճարների վերադարձ կատարելու մասին

ՀՎՀՀ

(կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

Գործատուի _____ 20__ թ. ներկայացված դիմումի համաձայն՝ վճարողի գերավճարի մնացորդից ենթակա է վերադարձման սոցիալական վճարներ՝ (դրամ)

Գանձապետական հաշվի համարը, որից կատարվում է վերադարձ	Բանկը, որին պետք է փոխանցել վերադարձման ենթակա գումարը	Հաշվի համարը, որին պետք է փոխանցել վերադարձման ենթակա գումարը	Անձնական հաշվի քարտում հաշվառված գերավճարից վերադարձման ենթակա գումարը

Վերադարձման ենթակա գումարն արձանագրվել է

ուսումնասիրությամբ, համաձայն _____ 20__ թ. N _____ որոշման:

Եզրակացության կազմման ամսաթիվը _____ 20____ թ.

(Տարածքային) հարկային տեսչություն _____
(անվանումը)

(Տարածքային) հարկային տեսչության պետ _____
(անունը, ազգանունը և ստորագրությունը)

Կ. Տ.

2և ՍՎՆ3

ԱՍՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ N _____

Վճարողների գերավճարների վերադարձների մասին

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը ամփոփելով 20____ թ. _____ -ի _____ -ից մինչև 20____ թ. _____ -ի _____-ը հարկային (տարածքային) տեսչություններից ստացված եզրակացությունները, տեղեկացնում է, որ կենտրոնական գանձապետարանի հետևյալ կամուրջ հաշիվներից ստորև նշված սոցիալական վճարների գումարները ենթակա են վերադարձման վճարողների հետևյալ հաշվարկային հաշիվներին.

(դրամ)

Հ/հ	Կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը	ՀՎՀՀ	Գանձապետական հաշիվը, որից կատարվում է վերադարձ	Բանկը, որին պետք է փոխանցել գումարը	Հաշվի համարը, որին պետք է փոխանցել գումարը	Գումարը	Նշումներ
Ընդամենը							